ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարբուխի դեմ պատվաստանյութ

Ինչ է Պետք Իմանալ

(Հարբուխի դեմ պատվաստանյութ, Ապաակտիվացրած կամ ռեկոմբինանտ)

2014-2015 թթ

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի տեղեկատվական շատ թերթիկներ առկա են իսպաներենով եվ այլ լեզուներով: Տես՝ www.immunize.org/vis

1 Ինչ է Պետք Իմանալ

Հարբուխը (գրիպը) , որը Ամերիկայի Միացյալ Նահանգներում տարածվում է յուրաքանչյուր ձմեր, մասնավորապես՝ հոկտեմբերից մայիս ամիսներին:.

Հարբուխի պատճառն են հիմականում հարբուխի վիրուսները և այն հիմականում տարածվում է հազալու, փռշտալու և անմիջական շփման հետևանքով:

Յուրաքանչյուր ոք կարող է վարակվել հարբուխով, սակայն երեխաների շրջանում հարբուխով վարակվելու վտանգը ամենաբարձրն է: Ախտանիշները կարող են հանկարծակի առաջ գալ և տևել մի քանի օր: Դրանք ներառում են.

- բարձր ջերմության դող
- ցավ կոկորդում
- մկանային ցավեր
- Հոգնածություն
- Հազ
- Գլխացավ
- արտադրություն քթից կամ փակ քիթ

Որոշ մարդիք ավելի ծանր են տանում հարբուխը, քան մյուսները: Այս մարդկանց թվում են փոքր երեխաները, 65 տարեկան կամ ավելի մեծ մարդիկ, հղի կանայք և որոշակի առողջական խնդիրներ ունեցող մարդիկ՝ ինչպիսիք են սրտի, թոքերի կամ երիկամների հիվանդությունները, նյարդային համակարգի խանգարումները կամ թուլացված իմունային համակարգը: Այս մարդկանց և նրանց հետ անմիջական շփման մեջ գտնվող անձանց համար համար հատկապես կարևոր է հարբուխի դեմ պատվաստումը:

Հասրբուխը կարող է հանգեցնել թոքաբորբի և ախտանիշերը կարող են վատթարանալ: Երեխաների մոտ այն կարող է լ:ուծ և ցնցումներ առաջացնել:

Ամեն տարի Ամերիկայի Միացյալ Նահանգներում հազարավոր մարդիկ են մահանում հարբուխից, և ավելի շատ մարդիկ հոսպիտալացվում են:

2 Հարբուխի դեմ ապաակտիվացված, ռեկոմբինանտ պատվաստանյութ

Դուք ստանում են հարբուխի դեմ սրսկվող պատվաստանյութ, որը կամ <ապաակտիվացված> կամ <ռեկոմբինանտ> պատվաստանյութ է: Այս պատվաստանյութերը չեն պարունակում հարբուխի կենդանի վիրուսներ: Նրանք տրվում են ասեղային սրսկմամբ և հաճախ կոչվում են <հարբուխի սրսկումներ>:

Հարբուխի դեմ այլ, ատենուացված (թուլացված) պատվաստանյութը փչվում է քթածակերի մեջ: Այդ պատվաստանյութը նկարագրվում է առանձին Պատվաստանյութի տեղեկատվական թերթիկում:

Խորհուրդ է տրվում հարբուխի դեմ պատվաստումս ստանալ ամեն տարի: 6 ամսեկանից 8 տարեկան որոշ երեխաներին պատվաստումը հարկավոր է նույնիսկ տարեկան երկու անգամ:

Հարբուխի վիրուսները մշտապես փոփոխվում են: Ամեն տարի հարբվբուխի դեմ պատվաստանյութը պատրաստվվում է պաշտպանելու համար 3-4 վիրուսներից, որոնք հավանաբար այդ տարվա մեջ կարող են հանդիսանալ հիվանդության պատճառը: Հարբուխի դեմ պատվաստանյութերը չեն կարող կանխարգելել հարբուխով հիվանդացության բոլոր դեպքերը, սակայն դրանք լավագույն պաշտպանությունն են հիվանդությունից:

Պատվաստումից հետո 2 շաբաթ է հարկավոր, որ ստեղծվի պաշտպանական ռեակցիա, և այն պահպանվում է մի քանի ամսից մինչև մեկ տարի:

Որոշ հիվանդություններ, որոնց պատճառը հարբուխը չէ, սխալմամբ ախտորոշվում են որպես հարբուխ: Հարբուխի դեմ պատվաստանյութը չի կանխի այս հիվանդությունները: Այն միայն կկանխի հարբուխը:

Հարբուխի դեմ որոշ ապակտիվացված պատվաստանյութեր պարունակում են սնդիկի հիմքով կոնսերվանտ, որը կոչվում է թիմերոսալ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պատվաստանյութերում պարունակվող թիմերոսալը վնասակար չէ, սակայն առկա են նաև կոնսերվանտ չպարունակող պատվաստանյութեր:

3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստումը

Պատվաստանյութը ձեզ սրսկող անձին տեղեկացրեք.

- Եթե ուժեղ, կյանքին սպառնացող ալերգիաներ ունեք, ներառյալ (օրինակ) ալերգիա ժելատինի կամ հակաբիոտիկների նկատմամբ: Եթե երբևէ հարբուխի պատվաստանյութի նկատմամբ կյանքին սպառնավցող ռեակցիա եք ունեցել, կամ ուժեղ ալերգիա ունեք այս պատվաստանյութի ցանկացած մասի հանդեպ, դուք չպետք է պատվաստում ստանաք:
- Եթե ունեք ԺիլենԲարի ախտանիշ (սաստիկ պառալիզացնող հիվանդություն, որը նաև կոչվում է GBS): GBS ունեցող որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը: Այս հարցը պետք է քննարկվի ձեր բժշկի հետ:
- Եթե լավ չեք զգում: Պատվաստանյութը սովորաբար կարելի է ստանալ, եթ մի փոքր հիվանդ եք, սակայն կարող է խորհուրդ տրվել սպասել մինչև որ լավ զգաք: Դուք պետք է վերադառնաք, երբ լավ զգաք:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

4 Խնդիրներ, որոնք կարող եք առաջանալ ցանկացած պատվաստանյութից.

Ինչպես ցանկացած դեղորայքի դեպքում, պատվաստանյութի դեպքում՝ հոգնածություն.

Թեթև խնդիրները, որոնք կարող են առաջանալ ցանկացած պատվաստումից հետո:

- Ցանկացած բժշկական պրոցեդուրայից հետո կարող են տեղի ունենալ կարճատև ուշագնացություններ: Մոտավարապես 15 րոպե նստելը կամ պարկելը կարող է կանխարգելել ուշագնացությունը կամ ընկնելու հետևանքով վնասվածքները: Գլխապտույտ, տեսողության փոփոխություններ կամ ականջներում աղմուկ ունենալու դեպքում այդ մասին հայտնեք բժշկին:
- Պատվաստումից հետո կարող է լինել ուժեղ ցավ ուսերի շրջանում և սրսկված ձեռքի շարժումների շրջակայքի նվազեցում՝ շատ հազվադեպ:
- Ծանր ալերգիկ ռեակցիաներ պատվաստանյութից շատ հազվադեպ են, մոտավորապես ավելի քիչ քան մեկ դեպքը թվով 1 միլիոն չափաբաժիններում: Եթե դրանք պատահեին, ապա դրանք կլինեին պատվաստումից հետո մի քանի րոպեից մի քանի ժամ հետո:

Թեթև խնդիրները հարբուխի դեմ ապաակտիվացված պատվաստանյութ ստանալուց հետո:

- Ցավ, կարմրություն կամ այտուց պատվաստման տեղում
- Ձայնի խզվածություն
- Ցավ աչքերում, աչքերի կարմրություն կամ կծկծոցներ
- հազ
- բարձր ջերմություն
- ցավեր
- գլխացավ
- քոր
- հոգնածություն

Եթե այս խնդիրները առաջանում են, դրանք սկսվում են պատվաստումից քիչ ժամանակ անց և տևում են 1 կամ թ օր:

Միջին ծանրության խնդիրներ, որոնք կարող են առաջանալ հարբուխի դեմ ապաակտիվացված պատվաստանյութը ստանալուց հետո:

- Հարբուխի դեմ ապաակտիվացված պատվաստանյութը և պնևմոկոկային նպատվաստանյութը (PCV13) ստացող փոքր երեխաներին միաժամանակ սպառնում է բարձր ջերմության հետևանքով առաջացող ցնցումների վտանգ: Հարցրեք ձեր բժշկին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար: Ասեք ձեր բժշկին, եթե պատվաստանյութը ստացող երեխան երբևէ ցնցումներ է նունեցել:

Հարբուխի դեմ ապաակտիվացված պատվաստանյութը չի պարունակում հարբուխի կենդանի վիրուս և հարբուխ չի առաջացնում:

Ինչպես ցանկացած դեղորայքի դեպքում, մի փոքր հավանականություն կա, որ պատվաստումը լուրջ վնաս կամ մահ կառաջացնի:

Պատվաստանյութերի անվտանգությունը մշտապես դիտանցվե լ է: www.cdc.gov/vaccinesafety/

DCH-0457A

AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

5 Իսկ եթե ռեակցիան ուժգին լինի՞:

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնել:

- Ուշադրություն դարձրեք այն ամենին, ինչ ձեզ մտահոգում է՝ ինչպես օրինակ սաստիկ ալերգիկ ռեակցիային, բարձր ջերմության կամ վարքագծի փոփոխության նշաններին:

  Սաստիկ ալերգիկ ռեակցիայի նշանները կարող են ներառել եղնջացանը, դեմքի և կոկորդի այտուցը, շնչառության դժվարությունը, արագ սրտի զարկը, գլխապտույտը և թուլությունը: Դրանք սկսվում են պատվաստումից մի քանի րոպեներից մինչև մի քանի ժամ անց:

Ինչ պետք է անել:

- Եթե կարծում եք, որ լուրջ ալերգիկ ռեակցիա կամ այլ հրատապ հարց կա, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-11 և տարեք անձին մոտակա հիվանդանոց: Այլապես զանգահարեք ձեր բժշկին:
- Ապա ռեակցիայի մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի մասին կողմային արդյունքների հայտնաբերման համակարգ (VAERS): Ձեր բժիշկը պետք է կատարի հաղորդումը, կամ դուք դա ինքներդ կարող եք անել VAERS կայքէջում՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարելով 1-800-822-7967:

VAERS–ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6 Պատվաստման արդյունքում վնասի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստման արդյունքում վնասի փոխհատուցման ազգային ծրագիրը դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է որոշակի պատվաստանյութերից վնաս կրած անձանց փոխհատուցում տրամադրելու համար:

Այն անձինք, որոնք կարծիքով նրանք վնաս են կրել պատվաստանյութից, կարող են ծրագրի մասին իմանալ՝ լրացնելով հայց զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP կայքը՝ www.hrsa.gov/vaccinecompensation : Փոխհատուցում ստանալու համար հայցը ներկայացնելու համար գոյություն ունի ժամկետ:.

7 Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջական ծառայությունների մատուցողներին: 1-888-767-4687
- Զանգահարեք ձեր տեղական կամ պետական առողջապահական վարչություն:
- Կապ հաստատեք Հիվանդությունների հսկողության և կանխարգելման կենտրոնների հետ.
  - Զանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ
  - Այցելեք CDC–ի կայքը www.cdc.gov/flu

Vaccine Information Statement (Interim)

Inactivated Influenza Vaccine

Armenian

08/19/2014

42 U.S.C. § 300aa-26

Translation provided by the California Department of Public Health

Office Use Only

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջարկված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: